№ 29 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 — 1901 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 . № 29

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի կարեւոր բացատրութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ինչքան ենք մօտ ժողովրդին. Մեր գրամատէրերին. Նամակ Ալէքսանդրոպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր. Լսենք եւ այս կարծիքը։

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

—

Ի՞նչ դեր ունեն կատարելու այն մասնաւոր անձինք, որոնք կը ցանկանային օգնել վնասված գիւղացիներին։

Այդ հարցին պատասխան է տալիս վերջին կառավարական հաղորդագրութիւնը հետեւեալ կերպով։ Խօսելով անցեալ 1900 թուին անբերրիութիւնից վնասված տեղերի մասին և յայտնելով, որ կառավարութիւնը իր կողմից յատկացրել է հինգ միլիոն ռուբլու գումար, պաշտօնական հաղորդագրութիւնը նպատակայարմար է համարում և այն մասնաւոր անձանց բարեգործութիւնը, որոնք ցանկանում են իրանց նպաստներով թեթեւացնել կարօտ ժողովրդի կարիքները։ Այդպիսի նպաստները, ասում է հաղորդագրութիւնը, նոյնքան տեղին են, որքան և այն բոլոր դէպքերում, երբ օգնութեան է հասել հասարակական բարեգործութիւնը իր նուիրատուութիւններով։

Նպաստները կարելի է ուղարկել այն հիմնարկութիւններին, որոնք լիազօրութիւն ունեն այդ գործի համար, օրինակ նահանգապետների կազմակերպած մասնաժողովներին, Կարմիր-Խաչի տեղական բաժանմունքներին, պաշարների մատակարարութեան յատուկ հաստատութիւններին։

Կառավարչական ներկայ բացատրութիւնը շատ կարեւոր է և էական։ Նա բաց է անում մասնաւոր և հասարակական բարեգործութեան համար մի ամբողջ ասպարէզ։ Այդ բարեգործութիւնը իր միջոցներով լրացնում է կառավարութեան հասցրած օժանդակութիւնը և կարողութիւն է տալիս հասարակութեանը հետեւել կարօտ ժողովրդի պահանջներին և նրանց բաւարարութիւն տալ կարելին չափ լիակատար կերպով։

Հասարակական բարեգործութիւնը մեծ նշանակութիւն ունի մի երկրի զանազան մասերի մէջ համերաշխութեան և փոխադարձ օգնութեան գաղափարի զարգացման համար։ Այսօր անբերրիութիւնից վնասվել է երկրի մի մասը և նրան օգնում են աւելի բաղդաւոր և ապահով մասերը։ Վաղը վնասվում է մի ուրիշ մասը և դարձեալ շրջակայ տեղերը օգնութեան են հասնում։ Այդպիսով փոխադարձ օգնութեան գաղափարը ամրանում է և մարդիկ թէ սովորում են դիւրազգայ լինել դէպի ուրիշների կարիքները և թէ հաւատալ, որ նրանց դժբաղդութեան օրերում կը գտնվեն կարեկից անձինք, որոնք իրանց նպաստներով կը վերականգնեն կարօտութեան մէջ ընկածների վիճակը և կարողութիւն կը տան նրանց վերսկսելու վատնգված տնտեսութիւնը։

Մեր երկիրը մի քանի դէպքերում ցոյց է տուել օգնութեան գեղեցիկ օրինակներ։ Փոխադարձ օգնութեան աջող հետեւանքները լցրել են հասարակութեան սիրտը հաճելի տպաւորութիւններով և ծառայել են իբրև զօրաւոր խրախոյս ապագայի համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Կիեւի ընդհանուր նահանգապետ գեներալ Դրագոմիրով, ինչպէս հաղորդեցինք եւ մենք, դիմել է նահանգապետներին, առաջարկելով միջոցներ ձեռք առնել ընդհանրապէս տարածված մի չարիքի դէմ. դա այն է, որ գիւղական վարչութիւնների պաշտօնատար անձինք թոյլ են տալիս իրանց վարվել գիւղացիների հետ կոպտութեամբ, վիրաւորում են նրանց անձնաւորութիւնը, բռնութիւններ են գործ դնում։ «Волынь» լրագիրը, հաղորդելով, որ տեղական նահանգապետները արդէն համապատասխան հրամաններ են տուել գիւղական իշխանութիւններին, աւելացնում է մի քանի, շատ ճիշդ կերպով նկատված իրողութիւններ։ Այդ կոպիտ եւ վիրաւորական վերաբերմունքը դէպի գիւղացու անձնաւորութիւնը միշտ եւ միմիայն գիւղական իշխանութիւնները չեն ցոյց տալիս. յաճախ ինտելիգենտ պաշտօնեաներն էլ նայում են գիւղացուն, իբրեւ «մի բանի, որ ներկայացնում է անասունից մարդկութեան անցնելու շրջանը»։

Ցարգանքը դէպի անձնաւորութիւնը առհասարակ շատ թոյլ է զարգացած մեզանում, ասում է լրագիրը.—իսկ յարգանք դէպի գիւղացին եւ հասարակ մարդը բացակայում է ամենուրեք, ամբողջ Ռուսաստանում. եւ այդ, պէտք է ցաւելով խոստովանել, հասարակութեան ինտելիգենտ խաւերի կողմից է նկատվում։ Այսպիսի վերաբերմունքի պատճառը մասամբ այն է, որ ժողովրդական կրթութիւնը շատ թոյլ է զարգացած, մասամբ այն, որ մինչեւ այժմ դեռ ժողովրդի վրա ծանրացած է մարմնական պատիժը։

Ինչ էլ լինեն պատճառները, փաստը մնում է խայտառակ փաստ։ Ինտելիգենտ հասարակութիւնը—մեզանում դա աւելի շատ է նկատվում—հաւատում է գիւղի մարդկանց եւ ընդհանրապէս բոլոր հասարակ մարդկանց անասուններ։ Թող այդ տեսակ մարդիկ տգէտ լինեն, թող նրանց անձնական իրաւունքները պաշտպանելու համար պակաս լինեն կրթութիւնն ու դիրքը, բայց եւ այդպէս, դրանք մարդիկ են եւ ոչ թէ անասուններ։ Ո՞ւմ չէ յայտնի, որ անասնութիւնը մարդու մէջ հաստատվում է անկախ այն հանգամանքից՝ կըրթված է նա թէ ոչ, ունի՞ կարողութիւն, ոյժ, գիտութիւն եւ ուսում տուող անդրանիկ ընկերութիւնը—այս բոլորը Լէնա Մօրգենշտերնի անունն ու հռչակը բարձրացնող գործերն են։

1896 թւի սեպտեմբերին Բերլինում կանանց խնդրի համար տեղի ունեցած առաջին կոնգրէսը պարտական է նրա նախաձեռնութեան եւ անվեհեր, անդուլ աշխատանքին։ Այդ ժողովի մէջ կարդացված զեկուցումները կա՛մում են ստուար հատոր, որը հրատարակվեց մի առանձին մասնաժողովի ձեռքով, որի պարագլուխ կանգնած էր ինքը, Լէնա Մօրգենշտերն։

Այնուհետեւ նա, այդ անխոնջ կինը, միշտ յաճախում էր բոլոր՝ կին-անդամներ ունեցող եւ կանանց խնդրով զբաղվող ժողովները։

Բացի այս գործնական աշխատանքներից, Մօրգենշտերն յայտնի է եւ բազմաթիւ գրական երկերով, որոնք առանձնապէս նուիրված են կանանց խնդրին եւ կնոջ կրթութեան ու առողջապահութեան գործին։

Ամենահետաքրքրականը եւ ամենագովելին այն է, որ Մօրգենշտերն, իբրեւ ինքնուս, գիտէ դաշնամուր ածել եւ երգել, հիմնովին գիտէ գրականութիւն, գեղարուեստի պատմութիւն, բնագիտութիւն. եւ, վերջապէս, շատ լաւ ծանօթ է թէ տնտեսութեան եւ թէ տնտարարութեան։

—

Անցեալները ես խոստացել էի ծանօթացնել ձեզ գերմանական կանանց մեծ դաշնակցութեան նախագահ տիկին Ա. Գէրհարդի գործունէութեան հետ։

Այս անվեհեր եւ կնոջ էմանսիպացիայի քաջ պաշտպան կինը ուղղել է ամեն ազգերի կանանց եւ ընկերութիւններին մի հարցացուցակ, որի նպատակն է նիւթեր ժողովել սոցիոլոգիական մի մեծ ուսումնասիրութեան համար։ Այդ գործը նուիրված կը լինի հետեւեալ խնդիրը լուծելուն։

Կարելի է արդեօք կնոջ ֆիզիկական կազմակերպութիւնը եւ նրա ընտանեկան պարտականութիւնները միացնել նրա մտաւոր աշխատանքի հետ։

Աւելի պարզ ասած՝ կարող է արդեօք կինը, ինչպէս նա ստեղծված է, մարդու գնալ, երեխաներ ծնել, կերակրել, պահպանել, մեծացնել նրանց, տունը կառավարել եւ մի եւ նոյն ժամանակ պարապել մտաւոր աշխատանքով, այսինքն՝ գրքի եւ գրչի հետ գործ ունենալ։

Ահա այս, ինչպէս տեսնում էք, լուրջ եւ համաշխարհային նշանակութիւն ունեցող խնդիրն է, որ զբաղեցնում է ներկայումս տիկին Ա. Գէրհարդին։

Բերենք այստեղ 16 էջից բաղկացած այն հարցացուցակը, որին ամեն մի կին, ամեն մի հասունացած օրիորդ անգամ կարող է պատասխանել ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն եւ մինչեւ անգամ ռուսերէն լեզուով։

1) Ի՞նչ է ձեր անունը։ 2) Ի՞նչ ազգութեան էք պատկանում։ 3) Ձեր արհեստը։ 4) Ինչով է պարապում ձեր ամուսինը։ 5) Քանի տարեկան էք։ 6) Ե՞րբ էք սկսել ձեր ուսումը։ 7) Որպիսի աշխատութիւններ ունէք հրատարակած, եւ ինչպիսի գործունէութեան էք նուիրել ձեր անձը։ 8) Ձեր քաղաքական դրութիւնը։ 9) Քանի երեխայ ունէք։ Ե՞րբ են ծնվել նրանք։ 10) Դուք ինքնուրոյն էք ծիծ տուել ձեր երեխաներին։ 11) Ընդհատած ունէք դուք երբեւ իցէ ձեր գործը։ Որքան ժամանակամիջոցներով։ Ի՞նչ պատճառներով։ 12) Քանի երեխաներ ունէք՝ մեռած։ 13) Ձեր երեխաները ձեզ մնա՞ն են մեծացել, թէ ոչ։ 14) Որքան ժամանակով են հեռացած եղել նրանք ձեզանից։ 15) Ձեր արհեստը, ձեր պաշտօնը ստիպում են ձեզ բաժանվել ձեր մանուկներից եւ որքան ժամանակով։ 16) Զանազան տեղեկութիւններ։

Այս վերջին կէտը, ինչպէս տեսնում էք, հնարաւորութիւն է տալիս ձեզ պատմել ձեր կեանքի ամեն մի հանգամանք ամեն մի մանրամասնութիւն։ Դուք ուղղակի կարող էք ներկայացնել ձեր կենսագրութիւնը։ Բայց որ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏ ԺԱՄԵՐ

Դարձեալ կանայք

—

«Մի ծաղկով գարուն չի լինի», ասում է ժողովրդական առածը։

Բայց ես չեմ հաւատում։

Իմ կարծիքով՝ ոչ միայն մի ծաղիկը, այլ եւ ծաղկի մի հատ փոչին ընդունակ է եւ կարող է գարուն ստեղծել։

Կար ժամանակ, որ գրագէտ կինը համարվում էր հազուագիւտ երեւոյթ։ Մինչդեռ այսօր ոչ միայն գրագէտ, այլ եւ կանանց խնդրով զբաղվող, ուսմամբ, կրթութեամբ լուսաւորված, ազատ-անկախ գործունէութեամբ պարապող եւ տղամարդից ամենեւին ոչ-պակաս շահ բերող կանանց թիւը հազարների է հասնում։ Եւ այդ թիւը, ինչպէս գիտէք, օրից օր աճում է եւ սփռվում աշխարհի ամեն ծայրերն ու անկիւնները։

Մի մոռացէք, որ առաջին մտածողը մէկն է եղել. իսկ առաջին սկսողը մէկից ոչ-աւելի։

Ընկաւ փոչին պարարտ հողի մէջ, բուսաւ առաջին ծաղիկը, որը եւ արտադրեց իր նման շատ ծաղիկներ։ Եւ ահա, մի գեղեցիկ օր, բացվեց գարունը, մի ժշտադալար գարուն, որին ոչ ամառվայ այրող տօթը, ոչ աշնան ամպամած երկինքն ու հեղեղները եւ ոչ ձմեռվայ բուք ու սառնամանիքը այլ եւս չեն կարող խեղդել, չեն կարող փչացնել։

Կանանց խնդիրը արդէն յաւերժ կենդանի մի գարուն դարձաւ հաւայն մարդկութեան համար...

Այս անգամ կը կամենայի համառօտակի պատմել ձեզ կանանց խնդրով զբաղվող եւ իր բեղմնաւոր գործունէութեամբ ամբողջ լուսաւոր

պայմաններով ու չի խարխափի այլ նոր հոգի, միտք ու սիրտ կաշկանդող խաւարի ճանկերում։

Առաջին անգամը չէ «Մշակի» էջերից այսպիսի հրաւէր լսվում։ Նոյնը շատ անգամ կրկնել է մեզ իր խրոխտ, իր աղդու ու ցնցող ձայնով մեր մեծ ուսուցիչ Գրիգոր Արծրունին եւ այժմ էլ նոյնը կրկնվում է իբրեւ մի բաղձալի ցանկութիւն, որի իրագործումը պահանջվում է գոնէ XX-րդ դարում, քանի որ անցեալ դարում մենք, ընդհանուր առմամբ, անընդունակ եղանք իրագործել այդ հասարակ բանը, այն է՝ մօտ լինել ժողովրդին, չը խորշել նրանից ու չօտարանալ այն միջավայրից, որտեղ անցել է մեզանից շատերի մանկութիւնը, չարհամարհել մեր նախկին տրեխակցին, որի հետ մենք կեանքի համարեա մի եւ նոյն պայմաններում անց ենք կացրել մեր նախադպրոցական տարիները։ Ժողովրդից խորշելը, օտարանալը, նոյն իսկ նրան արհամարհելը եղել են եւ են ամենասովորական երեւոյթներ մեր մէջ, որոնք աւելի զայրացուցիչ ու պախարակելի են այն ժամանակ, երբ նկատվում են ժողովրդի հեռաւոր խաւերից, գիւղական խրճիթներից բաղդի ու հանգամանքների բերմունքով դուրս եկած ինտելիգէնտների շրջանում։ Առանց չափազանցութիւնների մէջ ընկնելու կարող ենք ընդգծել այն եւս, որ այդպիսի ինտելիգէնտները մեծ մասամբ աւելի են խորշում ժողովրդից, քան ուրիշ դասակարգերից ծագում ունեցողները։ Գուցէ այդ ցաւալի երեւոյթի պատճառներից մէկն էլ այն է, որ ժողովուրդը իւրայիններին, իր միջից դուրս եկածներին այն արտաքին յարգանքը չէ ցոյց տալիս, ինչպէս ուրիշներին, վերաբերվում է նրանց «ֆամիլիար» կերպով, դեկավարվելով «տանու տէրտէրին օրհնեա տէր չը կայ» առածի իմաստով, բայց մթթէ այդ չնչին պատճառը կարող է մեղմացնել այն յանցանքը, որի անունն է բարոյական պարտքի ուրացում, որը ամեն քայլում թոյլ են տալիս իրանց «կարիերա» կոչվող սքանչելի աստուածուհուն երկրպագողները...

Գիւղացին կոպիտ է, անտաշ է, նրա հաճոյախօսութիւնները շատ պարզ են ու անշուք, իսկ ուշունդները ճոխ, աղդու, ցնցող, խրոխտ,—մի խօսքով կատարեալ կլասիքական... Ո՞վ պէտք է նրան տաշէ, զարդարէ նրա կոպիտ կրքերը, ազնուացնէ նրա անհատական, եւս առաւել նրա հասարակական վարք ու բարքը, եթէ ոչ նրա հետ յաճախակի շփվող, նրա ցաւերը իր սրտին մօտ ընդունող, դէպի նրան իրբեւ մարդու յարգանք տածող ինտելիգէնտը։ Ասում եմ յարգանք, այլ ոչ թէ սէր, քանի որ վերջինս մի այնքան կարելի է համառօտ, ամփոփ։

Եւրոպացին, մանաւանդ եւրոպական լուսաւորված կինը ժամանակ եւ գլուխ չունի մեր «պապոնց նանի» անվերջ ու անհամ հէքիաթները կարդալու...

Ահա եւ հասցէն.

A. W. Frau Adele Gerhard Nohenstrasse, 41, Berlin.

Ուղարկեցէք ձեր պատասխանները վերեւ յիշած որ լեզուով կամենաք։

Բայց որովհետեւ հայերիս մէջ շատ կան կանայք եւ օրիորդներ, որոնց համար դժուար կը լիներ կազմել իրանց տեղեկագիրը օտար կամ ռուս լեզուներով, ուստի նրանք կարող են գրել հայերէն եւ ուղղել «Մշակին»։

Եթ հաւատացած եմ, որ «Մշակը» ամենայն պատրաստականութեամբ կընդունէ թարգմանել տալ եւ տեղ հատցնել մեր գեղեցիկ սեռի այդ գրուածքները։ Զէ՞ որ դրա համար էլ յատկապէս նա յանձն է առել մշակութեան ծանր լուծը...

Սերմացան

ԼՍԵ՛ՆՔ ԵՒ ԱՑՍ ԿԱՐԾԻՔԸ

—

Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հարիւրամեակը առաջ է բերում ռուս մամուլի մէջ նոր-նոր գրութիւններ։ «Новое Время»-ի սեփականատէր պ. Սուվորինի հրատարակութեամբ լոյս տեսնող «Историч. Вѣст.» ամսագրի յունվարի գրքում զետեղված է պ. Ս. Ումանեցի յօդուածը «Կուրի ափերում» (եր. 247—302)։ Յօդուածագիրը à vol d'oiseau խօսում է վրաց պատմութեան վերջին շրջանի մասին, վրաց եւ հայ գրականութեան, թատրոնի մասին, Թիֆլիսի անցեալի եւ ներկայի եւ ի հարկէ անխուսափելի կերպով յայտնում է իր կարծիքը հայ-վրացական յարաբերութիւնների մասին։ Բերում ենք յօդուածի այն պիսի ցնորամիտ երազ է մեր մէջ, որի մասին մտածելն անգամ զուր է...

Ն. Տէր-Աւետիքեան

ՄԵՐ ԴՐԱՄԱՏԷՐԵՐԻՆ

—

Ի՞նչ է պատճառը, որ միլիարդներ ունեցող ամերիկացիները, եւրօպացիները գործ են գրանում իրանց ահագին դրամագլուխները չահեցնելու, գործադրելու, իսկ մեր երկրի դրամատէրերը, որոնց միլիոնները մի քանի մատների վրա կարելի է համրել, չը գիտեն՝ ինչ չահաւէտ ձեռնարկութիւնների վրա գործադրել իրանց գումարները եւ ստիպվում են չինութիւններ չինել վարձով տալու համար։ Գերմանացու, ֆրանսիացու, անգլիացու եւ բելգիացու դրամագլուխները վաղուց բուն են դրել մեր Կովկասում. այժմ, ինչպէս տեղեկացանք, ամերիկացիներն են ուշք դարձնում Կովկասի հարստութեան վրա, թէպէտ ամերիկացու դրամագլուխը դեռ երկար ժամանակ կարող է գործ գտնել մայրենի երկրում։

Անհերքելի է այն, որ Կովկասը, իրբեւ անմշակ երկիր՝ ահագին, անսպառ գանձ ունի իր մէջ, կարօտ մշակութեան եւ արդիւնաբերութեան, որի համար կարիք կայ մեծ դրամագլուխների։

Մեր դրամատէրերը կենտրօնացած են գլխաւորապէս Բագու եւ Թիֆլիս քաղաքներում. նրանց անհետաքրքրութիւնը թոյլ չէ տալիս իրանց քթից քիչ հեռու նայել, որ տեսնեն՝ թէ բացի նաւթից ինչ նիւթեր կարելի է արտահանել, իսկ շատերը գուցէ դժուարանան քարտէզի վրա ցոյց տալ, թէ ո՞րտեղ է գտնվում Երեւանի բերրի նահանգը *)։ Զարմանալի չէ, որ անգլիացին ձեռնտու է համարում Թիֆլիսի նահանգից ձու տեղափոխել եւ հասցնել Լօնդօն, իսկ Թիֆլիսեցին դեռ չը գիտէ Երեւանի նահանգի խաղողի եւ դեղձի համը, թէեւ այդ նահանգը իրանից միայն մի քանի քայլ է հեռու, համեմատած Լօնդօնի հետ։

Շուտով երկաթուղին ակօսելու է Արարատեան լայնատարած բերրի դաշտը. դրանով դրամական լայն ձեռնարկութիւնների ասպարէզ է բացվում, ուստի մեր դրամատէրերի ուշադրութեան ենք առաջարկում մի ձեռնարկութիւն, որը բաղմակողմանի նիւթական եւ բարոյական օգուտներ կարող է առաջացնել։— Յայտնի է, որ Երեւանի նահանգի հողը ընդունակ է արդիւնաբերել եւ արդիւնաբերում է ամեն բան, սակայն գիւղացի ժողովուրդը միշտ աղքատ է, չը գիտէ կանոնաւոր մշակել եւ սպառել իր արդիւնաբերածը, իսկ դրամական չնչին պահանջի ժամանակ նա գլուխ է ծռում եւ գերի է դառնում վաշխառուներին։ Թէպէտ օրէնքը արգելում է 12%-ից աւելի վերցնել, բայց գիւղացին վաղուց ընտելացել է իր անել դրութեան եւ լաւ գիտէ, որ մատչելի պայմանով իրան ձեռք մեկնող չի լինի, ուստի անտրտունջ կերպով վճարում է իրանից պահանջածը։

Յայտնի է, որ դրամագլուխը պետական եւ միւս բանկերում բերում է 4—7%, իսկ գիւղացին վճարում է վաշխառուին 20—30% եւ աւելի. ուրեմն երկուսի համար էլ չահաւէտ կը լինի, եթէ դրամատէրերը համաձայնութեան գան գիւղացիների հետ եւ գիւղական բանկեր հիմնեն՝ 12% վերցնելու պայմանով։ 12% ծանր չէ գիւղացու համար, քանի որ նա վճարում է 20—30%. դրամատէրը կրկնակի վաստակ կունենայ, իսկ գիւղացին միանգամ ընդ միշտ ազատված կը լինի վաշխառուի հետ յարաբերութիւն ունենալուց։

Առաջարկում ենք հիմնել առեւտրական-արդիւնաբերական ընկերութիւն, բանալ կենտրօնական գիւղերում գիւղատնտեսական-առեւտրական բանկեր, բաց թողնել թեթեւ գումարներ գլխաւորապէս գիւղատնտեսական կարիքների համար, բանկի միջոցով տարածել գիւղատնտեսական մեքենաներ, անասուններ, սերմեր եւ այլն, որոնց ձեռք բերելու համար մեծ դժուարութիւններ է կրում գիւղացին, դրամի փոխարէն ստանալ հում բերք, օրինակ, բամբակ, բուրդ, կաշի, չերամ, ձիթապտուղ, ցորեն եւ նոյն իսկ անասուն եւ խաղող, որպիսի նիւթերից հնարաւորները տեղումը մշակել, իսկ մնացածը հում կերպով արտահանել վաճառելու։

Սրանով կը կանոնաւորվի գիւղացու մշակութեան եւ արդիւնաբերութեան ձեւը, որովհետեւ գիւղացիները կը դեկավարվեն ընկերութեան օգտակար ցուցմունքներով։ Սրանով կրկնակի օգուտ կունենայ ընկերութիւնը, որովհետեւ բացի բանկային տոկոսներից՝ նա կօգտվի նաեւ առեւտրական գործողութիւնից։

Մենք ծանօթացանք Թիֆլիսում մի քանի առեւտրական ձեռնարկութիւնների հետ, որոնք կատարելով իւրաքանչիւրը մօտ մի միլիոն ռուբլու շրջանառութիւն, հազիւ 7% վաստակ են ունենում։ Ուրեմն ինչու՞ այդ դրամագլուխները չը դարձնել դաւառներում, որը կարող է 12—30% օգուտ տալ եւ որով միջոց տուած կը լինեն գիւղացիներին չունչ քաշելու։

Ահա մի լայն ասպարէզ շահաւէտ կերպով դրամագլուխ գործադրելու համար. արգելքը միմիայն աշխարհից անտեղեակ լինելն է։ Պէտք է ունենալ ձեռնարկութեան ոգի եւ պատրաստականութիւն։ Ցանկացողներին չենք մերժի մեր մանրամասն ուսումնասիրութիւնը հաղորդել։

Յով. Խօջաէյնաթեանց

*) Առաջին անգամ միայն պ. Ս. Ծատուրեան ուշք դարձրեց Երեւանի նահանգի վրա, մի ընդարձակ հողային բաժին ձեռք բերելով։ Յուսով ենք տեսնել յիշեալ կալուածքում մի կանոնաւոր տնտեսութիւն, որ օրինակելի լինի միւս տեղացիների համար։

ՄԵՐ ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

—

Փետրվարի 1-ին

Մեր առաջադիմութեան եւ կրթութեան գործով հետաքրքրվող ամեն մի մարդ անշուշտ իրաւունք ունի մեզ հարցնելու, թէ մեր հասարակութիւնը ինչպէս է վերաբերվում դէպի մեր նորաբաց գրադարան-ընթերցարանը, որի համար երկար տարիներից ի վեր գործ էր դրվում այնքան աշխատանք եւ ժամանակ։ Եւ արդարեւ, միայն այսօրվայ մեր դէպի գրադարանն ունեցած յարաբերութիւնը կարող է ապացուցանել, թէ որքան անկեղծ էին մեր խօսքերն ու ցանկութիւնները, որքան խորն էին մեր համոզմունքները եւ իրաւացի մեր յոյսերը։

Եւ սակայն այսօր, բացման ամիսը դեռ չը լրացած, մենք մեզ լիովին գոհ եւ ուրախ ենք զգում, երբ նկատում ենք, որ դուժայի ընդարձակ եւ փառահեղ դահլիճը, ուր փոխադրվեց գրադարան-ընթերցարանը, երբեմն այնպէս է լցվում յաճախորդներով, որ շատերը ստիպված են լինում ոտքի վրա կանգնել եւ ժամերով սպասել այս կամ այն լրագրի ձեռք բերելու հերթին։ Այս մի քանի օրվայ ընթացքում գրադարանի բաժանորդների թիւը հասաւ 148-ի. յոյս կայ, որ շուտով այդ թիւը կը կրկնապատկվի եւ կեռապատկվի։ Յունվարի 27-ին, միայն մուտքի համար վճար տալով, գրադարան էին մտել 110 հոգի։

Յոյս ունենք, որ Ալէքսանդրօպոլի հասարակութիւնը կաշխատէ շուտով ապացուցանել, որ ինքը մի մեռած ու անկենդան դիակ չէ, թէ նա գիտէ հետաքրքրվել ազգային կեանքով, հասարակական հարցերով եւ ուրախութեան ու վշտի առարկայ դարձնել մերձաւորի խինդն ու լացը, իր նմանի ցաւն ու տանջանքը։ Ընդարձակել մի փոքր իր աշխարահայեացքը, ճանաչել իր չարն ու ու բարին, ճանաչել այն միջավայրն ու պայմանները, որոնց մէջ ապրում է նա, ահա թէ ամենից առաջ ինչ պէտք է սովորէ մեր գրադարան-ընթերցարանի յաճախորդը, որը իր առանձնացած կեանքով մինչեւ այսօր ներկայացել է մի կորված բեկոր եւ մի անջատված մասն այն համախմբումի, որին անուանում ենք հասարակական կեանք։ Բայց թէ քանի՞ քանի՞ բարիքներ պիտի բերէ մեր ժողովրդին այդ գիտակցութիւնը, իր ազատ ժամանակի այդ կերպ գործադրութիւնը, այդ մեզ ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Նիքի թշնամի։ Ամենազօր ժամանակը կամաց կամաց սառեցրեց կրքերը։

«Պատերազմող Վրաստանի ներկայացուցիչ Ն. Նիկոլաձէ իսկոյն հանգստացաւ, երբ ընտրվեց Փօթիի քաղաքագլուխ, իսկ իշխ. Ի. Ճավճավաձէ, դառնալով վրաց բանկի դիրեկտոր, անձնատուր եղաւ իր նոր պարտականութիւններին։ Մինչդեռ հայ վաշխառուն լուռ շարունակում էր իր գործը եւ որտեղ կարելի էր, իր ձեռքը գցեց վրացու գիւղը, եւ վրաց բոլորովին քայքայված ազնուականութիւնը անզօր ականատես էր իր աստիճանաբար աղքատանալուն։

«Ահա վրացի-հայկական վէճի հիմքը. վրացիները Վրաստանի քայքայումը վերագրում են հայկական վաշխառութեան. հայերը ջերմ կերպով հերքում են այդ, ասելով որ դա զրպարտութիւն է, որ վաշխառութիւնը Կովկասում ծաղկում է վրացիների մէջ ոչ պակաս քան հայերի մէջ, եւ եթէ պէտք է կուել վաշխառութեան դէմ, այն ժամանակ պէտք է կուել այդ ախտի դէմ առհասարակ եւ ոչ միայն առաջ բերել հայ վաշխառուին։

«Ո՞վ է արդարը. իմ կարծիքով աւելի շուտ հայերը։

«Վաշխառութիւնը անշուշտ մեծ չարիք է. բայց դա կատարելապէս միջազգային ախտ է եւ Կովկասում վաշխառու կը գտնէք թէ հայերի եւ թէ վրացիների մէջ։

«Կարսի շրջանում, օրինակ, վաշխառուն Թուրքը եւ քիւրդն է, որ իշխում է ամբողջ ազգաբնակութեան վրա։ Քութայիսի նահանգում եւ ամբողջ Իմէրէթիայում, ուր գրեթէ չը կայ հայ տարր, բռնակալ տէր է վրացի վաշխառուն։ 1898 թ-ին Քութայիսի նահանգական դատարանում քննվում էր մի գիւղացի վրացու վաշխառութեան բնորոշ գործը. նա իր հարեւաններից (վրացի) եւ անգամ մօտիկ բարեկամներից վերցնում էր բոլորովին անկարելի, անասուած տոկոսներ։ Իմէրէթիայում հայ չը կայ, մինչդեռ Վրաստանի այդ մասը լաւ ծանօթ է վրացի վաշխառուի հետ»։

Հայկական կապիտալի գերիշխանութիւնը Թիֆլիսի նահանգում հեղինակը բացատրում է գիւղացիների տնտեսական նեղ դրութեամբ։ Բայց նոյն պատճառը զոյութիւն ունի եւ երկրի ուրիշ մասերում։

Ամսագրի նոյն գրքում բերված է «Deutsche Revue» ամսագրից մի կտոր մեծ վեզիր Զեվադ-փաշայի պատմութիւնից (եր. 395)։ Ռուս թարգմանիչը արդարացի կերպով նկատում է, որ հեղինակը, որի բերանով խօսում է փաշան, ծանօթացել է վերջինիս հետ հայկական կոտորածի ժամանակ չնորհիւ յայտնի թիւրքասէր Վամբերիի։ Այս անունը իսկոյն յիշեցնում է, թէ ինչ վարդագոյն լուսաւորութիւն կը ստանայ մի գրութիւն, որ վերաբերում է Թիւրքիային։

Ո՛վ ինչպէս, իսկ հայ ընթերցողը լաւ գիտէ թէ ինչ գին ունեն թիւրք պաշտօնեայի հերքումը, բացատրութիւնները պետութեան վերաբերեալ. եւ ես աւելորդ կը համարէի մի բօպէ կանգ առնել այդ գրութեան վրա, եթէ Զեվադը յաւակնութիւն չունենար խօսել եւ՛ ուրիշների տեղ։ Բանը նրանումն է, որ Զեվադը հրամայել է տեղեկութիւն հաւաքել հայերի թիւ մասին ամբողջ աշխարհում, եւ թիւրք վիճակագիրը մատը ծծելով նրա առաջ դրել է այդ թիւը՝ 800,000, որի կէսը բնակվում է Թիւրքիայում։

Խեղճ ռուս ստատիստիկան այնքան միջոց եւ ոյժեր չունի, որ սրա նման «համաշխարհային» տեղեկութիւններ հաւաքէ. նա բաւականանում է իր պետութեան ազգութիւնների թւահամարով. այդ ստատիստիկան մեզ ասում է, որ ռուսաց պետութեան մէջ զոյութիւն ունեն 850,000 հայ-լուսաւորչականներ։

Պետրոս Զաքարեանց

քան կարելի է համառօտ, ամփոփ։

Եւրոպացին, մանաւանդ եւրոպական լուսաւորված կինը ժամանակ եւ գլուխ չունի մեր «պապոնց նանի» անվերջ ու անհամ հէքիաթները կարդալու...

Ահա եւ հասցէն.

A. W. Frau Adele Gerhard Nohenstrasse, 41, Berlin.

Ուղարկեցէք ձեր պատասխանները վերեւ յիշած որ լեզուով կամենաք։

Բայց որովհետեւ հայերիս մէջ շատ կան կանայք եւ օրիորդներ, որոնց համար դժուար կը լիներ կազմել իրանց տեղեկագիրը օտար կամ ռուս լեզուներով, ուստի նրանք կարող են գրել հայերէն եւ ուղղել «Մշակին»։

Եթ հաւատացած եմ, որ «Մշակը» ամենայն պատրաստականութեամբ կընդունէ թարգմանել տալ եւ տեղ հատցնել մեր գեղեցիկ սեռի այդ գրուածքները։ Զէ՞ որ դրա համար էլ յատկապէս նա յանձն է առել մշակութեան ծանր լուծը...

Սերմացան

ԼՍԵ՛ՆՔ ԵՒ ԱՑՍ ԿԱՐԾԻՔԸ

—

Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հարիւրամեակը առաջ է բերում ռուս մամուլի մէջ նոր-նոր գրութիւններ։ «Новое Время»-ի սեփականատէր պ. Սուվորինի հրատարակութեամբ լոյս տեսնող «Историч. Вѣст.» ամսագրի յունվարի գրքում զետեղված է պ. Ս. Ումանեցի յօդուածը «Կուրի ափերում» (եր. 247—302)։ Յօդուածագիրը à vol d'oiseau խօսում է վրաց պատմութեան վերջին շրջանի մասին, վրաց եւ հայ գրականութեան, թատրոնի մասին, Թիֆլիսի անցեալի եւ ներկայի եւ ի հարկէ անխուսափելի կերպով յայտնում է իր կարծիքը հայ-վրացական յարաբերութիւնների մասին։ Բերում ենք յօդուածի այն

Գալով նուիրատուութեան գործին, պէտք է նկատել, որ չը նայելով վաղօրօք տարածված յայտարարութիւններին, մեր հասարակութիւնը, առանձնապէս ունեւոր դասակարգը, դեռ ցոյց չէ տուել մի աչքի ընկնող աջակցութիւն ու նպաստ։ Բայց, բարեբաղդաբար, երկու աչքի ընկնող նուիրաբերութիւններ այսօր գալիս են միխիթարելու մեզ եւ յուսադրելու հեռաւոր ապագայի համար։ Առաջին խոշոր նուիրատուութիւնը կատարեց գրագարան-ընթերցարանի խորհրդի նախագահ քաղաքագլուխ պ. Տէր-Պետրոսեան, որը իր խնամքին յանձնված հիմնարկութեան ընծայեց իր սեփական գրադարանը մօտ 2000 ր. արժողութեամբ գրքերով։ Երկրորդ նուիրատուութիւնը Բաքուում բնակվող այստեղացի պ. Յ. Պանլաւունու ուղարկած 200 ռուբլին էր։

Ամսիս 9-ին կը կայանայ այստեղ հայկական երրորդ ներկայացումը։ Խաղալու են մի շարք կատակերգութիւններ։ Այդ ներկայացումը աշխարհիս երեսին մինչեւ այսօր տեղի ունեցող ներկայացումներից զանազանվելու է նրանով, որ միաժամանակ մասնակցում են խաղին հայ, ռուս, Թուրք, վրացի եւ լեհացի թատերասէրներ։ Սակայն Աստուած տայ, որ առաջ չը գայ մի նոր բաբելոնեան աշտարակաշինութիւն...

Պ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետեւեալ համարը, Վարդանանց տօնի պատճառով, լոյս կը տեսնէ ոչ թէ վաղը, այլ շաբաթ օր, փետրվարի 10-ին։

Մեզ հաղորդում են, որ էջմիածինը հարց է տուել Թիֆլիսի հայոց կօնսիստորիային, թէ ինչ հիման վրա էր նշանակված պատիժ Կուկիայի Նորաչէն Աստուածածնի եկեղեցու քահանայ Տէր-Աղէքսանդրի համար։ Մի եւ նոյն ժամանակ թոյլ է տրվում քահանային շարունակել իր քահանայագործութիւնը։

Թիֆլիսում հրաշալի զարնանային եղանակներ է անում։ Օդը այնքան տաք է, որ ձմեռվայ վերարկուներով անկարելի է մանզալ։ Եղանակները լաւ են եւ շրջակայքում։

«Нов. Обозрѣніе» լրագիրը հաղորդում է, որ Երեւանում, Նահանգապետ կոմս Տիզենհաուզենի առաջարկութեամբ, կազմված է յանձնաժողով այգեգործական դպրոցի կանոնագրութեան նախագիծը մշակելու համար։ Յանձնաժողովի նախագահ է քաղաքագլուխ Ի. Մէլիք-Ազամալեան։ Քաղաքը իր կողմից տալիս է դպրոցին 3000 ռուբլի։

Նաւթային արդիւնաբերութեան Պետերբուրգի խոշոր ներկայացուցիչները, ինչպէս Տէր-Յակոբեան եւ ուրիշները, «Рус. Вѣд.» թղթակցի ասելով, միաձայն հաւատացնում են, թէ Բաքուի հրդեհը ոչ մի ազդեցութիւն չէ կարող ունենալ նաւթային շուկայի վրա։

«Новости» լրագրին հաղորդում են Մոսկվայից, որ Լեւ Տոլստոյի որդու նորերս տեղի ունեցած պսակադրութեան հանդէսին բարեհաճել է ներկայ գտնվել Մոսկվայի գեներալ-նահանգապետ Մեծ Իշխան Սէրգիյ Ալէքսանդրովիչ, որ այնուհետեւ այցելել է հարսի հօր, պ. Գլեբովի տունը, ուր տեղի ունէր հարսանիքը։ Հիւրերի ցրվելուց յետոյ Գլէբովի տունը գնացել է եւ Լեւ Տոլստոյ, որն իր տանից ոտով էր եկել այնտեղ, հագնված իր սովորական ձեւով։

Կիրակի, ամսիս 4-ին, Աւճալեան ժողովրդական թատրոնի դահլիճում, թատերասէրների խումբը՝ մասնակցութեամբ դերասան պ. Անդրանիկի, հայկական սեկցիայի նախաձեռնութեամբ, խաղաց Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները»։ Ներկայացման մասին խօսելն անգամ աւելորդ է. դա մի տարօրինակ խառնաշփոթութիւնների շարք էր։ Միմիայն պ. Անդրանիկն էր, որ իր գեղեցիկ խաղով բաւական զուարճութիւն պատճառեց։—Վատ չէին նաեւ տիկ. Նազելին եւ օր. Վարսենիկը։ Մնացած թատերասէրները անգիր չը գիտէին իրանց դերերը, աղաւաղում էին նախադասութիւնները, չէին տիրապետում լեզուին, եւ այդ պատճառով ներկայացումը ցանկալի ազաւորութիւնը չը թողեց հասարակութեան վրա։ «Մուրացկաններից» վերջ խաղացին «Մկիճի հարսանիքը»։ Պ. Անդրանիկը Մկիճի դերում իր մտածած, շնորհալի խաղով անչափ ծիծաղեցրեց հասարակութիւնը։ Դահլիճը, ինչպէս միշտ, ծայրէ ի ծայր լի էր։

Անցեալ տարիների անբերրիութիւնները, որոնց պատճառով կառավարութիւնը ստիպված էր բազմաթիւ եւ մեծաքանակ փոխառութիւններ տալ գիւղացիներին սերմացու դնելու եւ կերակրվելու համար, բոլորովին սպառեցին մնունդի մատակարարութեան ընդհանուր պետական դրամագլուխը։ Գիւղական ազգաբնակութեանը այս տարի եւս փոխառութիւններ տալու նպատակով՝ ներքին գործերի մինիստրութիւնը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, փոխարինաբար երկու միլիոն ռուբլի է ստացել պետական գանձարանից։

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 3-ին, առաւօտեան 5 ժամ 12 րոպէին, տեղի ունեցաւ երկրաշարժի բաւական զգալի հարուած, ստորերկրեայ հազիւ լսելի գոռոցով։ Ուղղութիւնը հարաւ-արեւելքից էր։ Ինչպէս լսում ենք, մի քանի գիւղերում հարուածը աւելի ուժեղ է եղել, բայց, բարեբաղդաբար, դժբաղդութիւն չէ պատահել»։

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Փետրվարի 1-ին, այս անգամ դումայի դահլիճում, կատարվեց ձայնաւորների ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ։ Ընտրողների թիւը հասնում էր—հայ եւ Թուրք խառն—257-ի։ Ձայնաւորի քուէներ ստացան աւելի շատերը, քան պէտք էր, բայց ամենից աւելի ստացան 26 հոգի հայերից եւ 14 հոգի Թուրքերից, որոնք եւ ամենայն արդարութեամբ պէտք է համարվեն ընտրված։ Չը նայելով, որ ընտրութիւնները անցան կանոնաւոր, առանց որ եւ է թիւրիմացութեան, բայց եւ այնպէս, քաղաքային վարչութիւնը, մանաւանդ ինքը, քաղաքագլուխը, յամառութեամբ պնդում է եւ աշխատում հաւասարեցնել նորընտիր ձայնաւորների թիւը։ Սրա համար նա դէն է գցում վեց հայեր եւ նրանց տեղը դնում Թուրքեր, որոնք անհամեմատ պակաս ձայն են ստացել առաջիններից։ Նորից կը դառնանք այս հետաքրքիր խնդրին՝ այն եւս մանրամասնութիւնների լիակատար նկարագրութեամբ։»

ԼԱԳՕԴԵԽԻՑ մեզ գրում են. «Մօտ երկու ամիս է, որ այստեղ սաստիկ տարածված է ինֆլուէնցա հիւանդութիւնը։ Բարեբաղդաբար անցնում է անվնաս եւ մարդկային զոհեր չեն լինում։ Մեղանում եղանակները անցնում են շատ մեղմ. դաշտերում կամ տափարակ անտառներում ձիւնի նշոյլ անգամ չը կայ. երկրի մակերեւոյթը կենդանութիւն է ստացել։ Մը-թերքների էժանութիւն է։»

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Սուրգա գիւղում մի սպանութիւն է տեղի ունեցել։ Ստեփան Թումասեան սպանել է Թաթոս Մարբեանին։ Ոմանց ասելով՝ սպանութեան պատճառը գողութիւն է, իսկ ուրիշների ասելով՝ այդ սպանութիւնը սիրահարական ատառունի։ Մարդասպանը բանտարկված է եւ գործը քննվում է։ Առհասարակ վերջին ժամանակներս մեր գաւառում սպանութիւններ շատ են պատահում եւ մեծ մասամբ հայերի մէջ, որ պատիւ չէ բերում խաղաղ բնաւորութեան համբաւ ունեցող մի ժողովրդի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռաշտ, յունվարի 13-ին

Ամսիս 7-ին երիտասարդների խումբը, ուսուցիչների մասնակցութեամբ, տղայոց դպրոցի դահլիճում տուեց մի ներկայացում յօգուտ Ռաշտի Հայուհեաց ընկերութեան։ Խաղացին «Սեւ հողերի» երկու գործողութիւնը, «200,000» կատակերգութիւնը եւ «Եաղաստ պիեսան, որ ուսուցիչ Ղազարեանցի նոր հեղինակութիւնն է եւ առաջին անգամն է բեմի վրա դրվում։ Ներկայացումը ընդհանրապէս լաւ անցաւ, թէեւ սիրողներից մի քանիսը դերերը չը գիտէին։ Մուտքը բաւարար եղաւ։ Երկրորդ գիշերը, յունվարի 8-ին, ներկայացումը կրկնվեց նաեւ կանանց համար։ Ի նկատի առնելով տեղի անյարմարութիւնը եւ այլ եւ այլ դժուար հանգամանքներ, եղածով մենք պիտի գոհ լինենք եւ խիստ կրիտիկայի չենթարկենք։ Սմօթ չի՛ լինի մեզ համար, եթէ ասենք թէ հայի մէջ միութիւն կը լինի։

Անմիութիւնը, ասը բոյն է դնում ամեն մի խոր անկիւնում, ուր հաւաքվում են երկու հայ։ Երկու հոգի եղած տեղը երեք կուսակցութեան են բաժանվում։ Ռաշտի նման մի քաղաքում, ուր խմբված են երեք տասնեակ տնւոր հայեր, անմիտ կուսակցութիւնների վերջ չէ լինում։ Պատահում է տարի, որ պայքարը լուում է, բայց բոլորովին չէ հանգչում, այլ նմանում մոխրի տակ թաղված բորբոքված կրակին, որ սպասում է մի թեթեւ քամու, որ իսկոյն բռնկվի։ Եւ գիտէք ինչու,—դատարկ բաների համար. ինչու այս ինչ պարոնին վիրաւորական խօսք են ասել. վաղը վիրաւորող պարոնը ժողովում է իր շուրջը իրան յարգողներին եւ ահա հակառակորդ, որ աշխատում է առաջինի վարկը եւ համարումը նսեմացնել։

Այսպէս ահա այստեղ մի քանի ժամանակից յետոյ միւս խումբը տալու է իր ներկայացումը պարակերէն լեզուով, քաղաքապետի հովանաւորութեան ներքոյ, յօգուտ տղայոց դպրոցի։ Ցանկանք աջողութիւն։ Բայց լաւ չէր լինի, որ մրցացած ոյժերով լինէր այդ բանը։

Յունվարի 5-ին Փիր-բազարից դէպի Էնզէլի նաւակով ճանապարհվում են 4 հոգի, որոնցից 3 հոգի յոյն են լինում եւ մէկը պարսիկ։ Էնզէլիին քիչ մնացած յանկարծ քամի է բարձրանում եւ նաւակը շրջում. բարեբաղդաբար անմիջապէս օգնութեան է հասնում մօտում եղած ձկնորսական նաւակը եւ ազատում է մահից։

Պարտքից ազատվելու, պատժից ազատվելու միջոցն է մահմեդականութիւն ընդունելը։ Այդպիսի դէպքեր շատ յաճախ են կրկնվում։ Օրինակ, անցեալ տարի մի Ֆրանսիացի հիւրանոցատէր, նեղվելով իր պարտատէրերից, ընդունեց Մահմէդի կրօնը, եւ ինչ էք կարծում.—նա ոչ միայն ազատվեց իր պարտքերից, այլ եւ փողի տէր դարձաւ, որովհետեւ ջերմեռանդ պարսիկը չը խնայեց իր կօպէկները յօգուտ իր սուրբ կրօնը ընդունողի։

Մի ուրիշ հայ երիտասարդ, այս օրերս լսելով, որ իրան զինուոր են տանելու, փախաւ եւ մօլլայի տանը նստեց, յայտնելով իր պատրաստականութիւնը մահմեդական կրօնի ծոցը մըտնելու։ Նոյն իսկ ռուսաց հիւպատոսի ջանքերը ի զուր անցան նրան այդ մտքից յետ կանգնեցնելու։ Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Новое Время» լրագրին հեռագրում են Բերլինից. «Բէյխստագի այն նիստում, որ տեղի ունեցաւ փետրվարի 1-ին, Բէբէլ առաջարկեց խստութեամբ պարտաւորեցնել միսիոնարներին չը խառնվել Չինաստանի ներքին գործերի մէջ, չը խաղալ չինական ատրճանաւորի դեր, չընդունել չինական ատրճաններ եւ չը-քանչաններ։ Բէբէլ, ապացուցանելով միսիոնարների յանցանքը չինական կոտորածի մէջ, պնդում էր այն բանի վրա, որ պէտք է սահմանափակել նրանց գործունէութիւնը կրօնական շրջանով։ Նրա կարծիքով՝ դնել չինացի քրիստոնեաներին Գերմանիայի պաշտպանութեան տակ նշանակում է պատերազմ յայտնել Չինաստանին։ Կաթոլիկական կենտրոնի ճառախօսները առարկում էին Բէբէլի դէմ, թէ միսիոնարները, մանդարինների դեր չը խաղալով, կորցնում են չինացիների յարգանքը, ենթարկվում են աւազակների եւ մարդասպանների յարձակումներին։ Կղերական ճառախօսները մեղադրում էին Բէբէլին, որ նա մի ժամանակ պաշտպան էր հանդիսանում քրիստոնեայ հայերին, իսկ այժմ խօսում է հակառակ չինացի քրիստոնեաների պաշտպանութեան։ Զայների մեծամասնութեամբ Բէբէլի առաջարկութիւնը մերժվեց։»

—Բալկանեան թերակղզու զանազան տեղերում ծագում են խռովութիւններ։ «Berliner Tageblatt» լրագրին այդ խռովութիւնների վերաբերմամբ հեռագրում են հետեւեալը. «Չը նայելով բոլոր պաշտօնական հերքումներին, մտքերի յուզմունքը Մակեդոնիայում չէ դադարում եւ գործերի դրութիւնը բաւական խառն է։ Շարունակ զինաւորված ընդհարումներ են պատահում ինչպէս բոլգարների եւ յոյների մէջ, այնպէս էլ ալբանացիների, քրիստոնեաների եւ մահմեդականների մէջ։ Բ. Դուռը մինչեւ անգամ չէ թագցնում, որ Ուէնօրում եւ Դիբրիում կառավարութիւնը ստիպված էր դիմել զինուորական ոյժի՝ խաղաղութիւնը եւ կարգը վերականգնելու համար։ Ռուսաց դեսպան Զինովիեվ, սուլթանի մօտ ունեցած վերջին ունկնդրութեան ժամանակ, խօսք բացեց գործերի խռովայոյզ դրութեան մասին Մակեդոնիայում եւ մատնացոյց արեց բարենորոգումների անհրաժեշտութեան վրա։ Բացի սրանից ռուսաց դեսպանը շօշափեց նաեւ հայկական հարցը եւ ցանկութիւն յայտնեց, որ Էրզրումում հէնց այժմ հիմնվի ռուս-թիւրքական միջնորդ դատարան քիւրդ-հայկական վէճը քննելու համար»։ «Berliner Tageblatt»-ի կարծիքով՝ թիւրքաց դիւանագէտները այս հարցում էլ կը դիմեն իրանց գործունէութեան սովորական եղանակին եւ չեն դուրս գալ իրանց բռնած դիրքից, այնպէս որ ամեն ինչ կը մնայ այնպէս, ինչպէս եղել է առաջ։

— «Pester Lloyd» հաւատացնում է, թէ Բոլգարիան առաջարկել է Սերբիային եւ Չերնոգորիային դաշն կապել նրա հետ հետեւեալ հիմունքներով —1) ազատել Մակեդոնիան, 2) օգնել մակեդոնացիներին յեղափոխութեան դէպքում թիւրքերին արտաքսելու համար, 3) Բոլգարիան պէտք է կռի դաշն ուղարկէ 250,000 զինուոր, Սերբիան—150,000, իսկ Չերնոգորիան 50,000 զինուոր այն դէպքում, եթէ Աւստրօ-Ունգարիան կամենայ տիրել Մակեդոնիային։ Իսկ եթէ գործի մէջ խառնվի Ռուսաստանը, այն ժամանակ դաշնակիցները կը քննեն իրանց մէջ գործունէութեան ապագայ եղանակը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լեհ կանանց դաշնակցութիւն։ Լվովից Բերլինի «Post» լրագրին հաղորդում են, որ այնտեղ հիմնվել է լեհ կանանց դաշնակցութիւն Աւստրիայում, Պրուսիայում եւ Ռուսաստանում։ Կազմակերպութեան գլուխ է կանգնած Գալիցիայի կանանց շարժման յայտնի գլխավոր տիկին Պլատոս։ Նոր դաշնակցութեան նպատակն է՝ նպաստել լեհ ժողովրդի կուլտուրական զարգացման, և դրա համար մատրութիւն կայ գլխաւոր ուշադրութիւնը դարձնել ժողովրդական կրթութեան և կանանց ու օրիորդների մէջ ազգային ինքնաճանաչութիւնը զարթեցնելու գործի վրա։ Դաշնակցութեան գործունէութիւնը կը տարածվի հասարակութեան բոլոր դասերի վրա, մանաւանդ պրոլետարիատի վրա։ Գլխաւորապէս լեհ կանայք պարտաւոր պէտք է լինեն ոգեորելու տղամարդկանց դէպի ազգային գործունէութիւն։ Աւստրիայի, Պրուսիայի և Ռուսաստանի բոլոր խոշոր քաղաքներում պէտք է պատուիրակուհիներ ընտրվեն, որոնք իրանց կողմից պէտք է ընտրեն Լվովի մասնաժողովը 15 տիկիններից։ Այդ դաշնակցութեան հիմնադիրների կոչի մէջ յայտնված է, որ բոլոր երեք պետութիւնների լեհ կանայք պէտք է իրանց համերաշխ գան։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 6-ին, ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնայի, Հէսսէյնի մեծ դքսի, Մեծ Իշխանների եւ Մեծ Իշխանուհիների, կայացաւ զօրավարական Թանգարանի հանդիսաւոր բացումը Կայսերական ակադէմիային կից։

ՆԻԺ-ԵՕՐԿ։ Ֆինանսների մինիստր Գէջ յայտնեց, որ նա ամենեւին չի փոխի այժմեան տընտեսական քաղաքականութիւնը Ռուսաստանի վերաբերմամբ։ Գէջ առարկում է, որ ամէրիկական պողպատէ արդիւնաբերութիւնը իբր թէ կոչնչանայ եւ յայտնում է, որ Ռուսաստանը չէ կարող կառավարվել առանց ամէրիկական մեքենաների եւ պէտք է տանէ գների բարձրացումը, որ առաջանում է մաքսահարկերի բարձրացումից։

ՀՌՕՄ։ Բարձրաստիճան պաշտօնեաներին հաղորդված է, որ Ելէնա Թագուհին արդէն մտել է ղութեան վեցերորդ ամիսը։

ՊԷԿԻՆ։ Երէկ տեղի ունեցաւ դեսպանների խորհրդակցութիւնը Չինաստանի պատասխանը քննելու համար չինական պաշտօնեաներին պատժելու վերաբերմամբ։ Դեսպանները անբաւարար են համարում այդ պատասխանը եւ վճռեցին պաշտպանել իրանց նախկին պահանջները։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Այն 2000 կաֆրներից, որոնք թողել էին աշխատանքը, վերադարձան միայն 150։ Ինչպէս յայտնեց Կապի գաղթականութեան գլխաւոր բժշկական պաշտօնեան, հիմք կայ վախենալու, որ կաֆրները ծածկում էին ժանտախտից հիւանդանալու շատ դէպքեր իրանց մէջ։

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդում Դէլկասէ հաղորդեց, թէ Պիշոն դեսպանը յայտնեց չինական կառավարութեանը, որ շուտով Ֆրանսիական գործակալները կը վերադառնան Մոնձի եւ Իւան։ Պիշոնի պահանջով, Ֆրանսիական գործակալներին հանդիպելու կուղեւորվի առաջին կարգի մի մանդարին, որ ցաւ կը յայտնէ նրան անցեալ տարվայ դէպքերի առիթով։ Չինական կառավարութիւնը, բացի դրանից, յայտնեց Պիշոնին, որ միջոցներ են ձեռք առնված Ֆրանսիացիների պաշտպանութեան համար։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէր հաղորդում է Պրետորիայից. «Վերջին տեղեկութիւններին նայելով, Դիվէտ գնում է դէպի հիւսիս։ Նա բանակել է այժմ Հաուպտաունից դէպի արեւմուտք եւ հաւանականօրէն կաշխատի անցնել դէպի հարաւարեւմուտք. զօրքերը պատրաստվել են այդ բանի համար։ Այս առաւօտ Ֆէրէյնինգի եւ Իօհաննէսբուրգի մէջ եւ բէյսերից դուրս եկաւ երկաթուղու գնացքը. բօէրները յետ մղվեցին նախ քան նրանց աջողվեց շատ բան վերցնել գնացքից. մեր կողմից մէկը սպանվեց եւ մէկը թեթեւ վիրաւորվեց»։

7 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է՝ Խարբինից, զեներալ Գրոդեկովին ուղարկած հետևեալ հեռագիրը զինուորական մինիստրին. «Ցունվարի 25-ին ես կարգադրեցի վերացնել զինուորական դրութիւնը Զաբայկալեան երկրի Տրոյցկոսավսկի եւ Ներչինսկի շրջաններում»։

ԿԻԵՎ։ Բուքը շարունակվում է հարաւարեւմտեան երկաթուղիների եւ Ֆաստովեան ճանապարհի շրջանում. ամենից շատ ձիւնով ծածկված են Կազեատինի եւ Գոլենդրի, նոյնպէս եւ Կազեատինի եւ Վինիցիի միջեւ գտնվող հողաբաժինները. Կազեատինի մօտ կանգառաւ մարդատար գնացքը. ճանապարհորդները փոխադրվեցին մի այլ գնացքի մէջ. ձիւնի շերտը մէկ արշին բարձրութիւն ունի ճանապարհի վրա. հինգ հազարից աւելի մարդիկ են աշխատում օր ու գիշեր. Ֆաստով, Կազեատին, Բիրզուլա եւ Խրիստինովկա կայարանները ծածկված են ձիւնով։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Դիլլօն հարցապնդում է անում՝ ճշմարիտ է արդեօք, որ դաշնակից զօրքերի հրամանատարները վճռել են Պէկինի կենտրօնում մի ընդարձակ բերդ կառուցանել օտար դեսպանութիւնները պաշտպանելու համար եւ որ իբր թէ անգլիական կառավարութիւնը հաւանութիւն է տուել դրան։ Արտաքին գործերի մինիստրի օգնական Կրանբօրն պատասխանում է, թէ ներկայումս Պէկինում օտար պետութիւնների ներկայացուցիչները քննում են դեսպանութիւնները պաշտպանելու միջոցների հարցը։ Անգլիական կառավարութիւնը դեռ ես ոչ մի վճռի չէ յանգել, բայց նա շատ լաւ հասկանում է, որ այդպիսի ձեռնարկութիւնների մէջ չը պէտք է դուրս գալ խելացի սահմաններից։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի մէջ Ասկվիտ ապացուցանում է, որ զիմադրական կուսակցութիւնն ես չէ ցանկանում հարաւային Աֆրիկայի վերաբերմամբ վերադառնալ դէպի status quos ante. զիմադրական կուսակցութիւնը երկար ժամանակով միացումը ներկայի նման վտանգի կրկնութեան առաջն առնելու լաւագոյն միջոցն է համարում։ Բրոդրիկ հաւաստիացնում է, որ Ասկվիտի ճառը զիմադրական կուսակցութեան կողմից ընդունվեց սառն լռութեամբ, թէպէտ,—ասում է նա,—հասել է ժամանակը հրաժարվելու կուսակցական հնացած երկպառակութիւններից։» Ապա Բրոդրիկ պատմում է, որ կառավարութիւնը վերջին երեք ամիսների ընթացքում Աֆրիկա ուղարկեց 30,000 ձիեր, մինչեւ որ մարտի վերջը կհասցնէր կունենայ 20,000 հեծելազօր աւելի քան այժմ։ Որպէս օգնական զօրք մինչեւ այժմ ուղարկված են 3500 ձիաւորներ, որոնք հաւաքում են այժմ Դէվէտին, եւ 10,000 մարդիկ հաւաքված են Կապի կոլոնիայում։ Բրոդրիկ հաղորդում է, որ բոլոր զեներալները հանգստութեան կարիք ունեն եւ պէտք է փոխարինվեն ուրիշներով։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Գէջ հանդիպում է սակաւ կողմնակիցների. լրագիրների մեծամասնութիւնը խիստ կերպով յարձակվում է նրա վրա, գտնելով, որ յամենայն դէպս գործել է շտապով. «Evening Post» եւ ուրիշ լրագիրներ ապացուցանում են, որ ակցիզից ազատելը կողմնակի արտահանական պրէմիա չէ դառ։ «Tribune» լրագիրը, որ պաշտպանում է Գէջին, ծաղրում է այն խօսքերը, թէ ամէրիկական արտահանութիւնը Ռուսաստանում հասնում է մինչեւ 30 միլիոն դոլլարի, այն ինչ յայտնի է, որ 1900 թւի ամբողջ արտահանութիւնը հաւասար էր միայն $10\frac{1}{2}$ միլիոնի։

Պատասխանելով Վաշինգտոնում ստացվող բաղմաթիւ հարցապնդումներին, Գէջ յայտնեց մի նամակի մէջ, որ հրատարակված է, թէ ռուսաց ֆինանսների մինիստրը, դժբաղդաբար։ համաչափ մաքսահարկի դնելը համարեց ռուսաց շաքարի սակագնի հաւասարեցումն, այն ինչ Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան, Հոլլանդիան եւ ուրիշ պետութիւններ պարտաւոր են վճարել լրացուցիչ մաքսահարկ։ Եթէ ռուսաց շաքարի վրա մաքսահարկ դնելը կը վերացնէ դատաստանական ինստանցիան, այն ժամանակ ռուսաց շաքարի ազատումը լրացուցիչ մաքսահարկից կընդունվի ուրիշ երկրների կողմից, որպէս նրանց դէմ ուղղված մի միջոց, ի նպաստ Ռուսաստանի։ Գէջ վերջը յոյս է յայտնում, որ եթէ ամէրիկական արտաքին գործերի մինիստրութիւնը պատշաւաւոր կերպով բացատրէ գործերի դրութիւնը ռուսաց կառավարութեան, ռուսաց ֆինանսների մինիստրը կը վերացնէ մաքսային միջոցը։

ՊԷԿԻՆ։ Լիխունգչանգ եւ Ցին հաղորդեցին դեսպանութիւններին, որ պալատը համաձայնվեց ի կատար ածել դեսպանների պահանջած պատիժները։

ԼՕՆԴՕՆ։ Թագաւորը շաբաթ օր ճանապարհ կընկնի Գերմանիա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։			№ 3 գնացքը։		
Բաղուից դուրս է գալիս	ցեր.	3 ժ. 5 ր.	գիշ.	11 ժ. 15 ր.	
Թիֆլիս է հասնում	առ.	8 » 23 »	եր.	5 » 35 »	
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 » 3 »	եր.	6 » 30 »	
Բաթում է հասնում	եր.	9 » 11 »	առ.	7 » 10 »	

№ 6 գնացքը։			№ 4 գնացքը։		
Բաթումից դուրս է գալիս	առ.	8 ժ. 56 ր.	եր.	10 ժ. 47 ր.	
Թիֆլիս է հասնում	եր.	8 » 42 »	առ.	11 » 18 »	
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 » 22 »	»	12 » 36 »	
Բաղու է հասնում	ցեր.	1 » 25 «	»	7 » — »	

ուրաց գնացք

Նաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

Թիֆլիսից դուրս է գալիս	առաւ.	7 ժ. 56 ր.
Բաղու է հասնում	երեկ.	9 » — »
Բաղուից դուրս է գալիս	առաւ.	6 » 50 »
Թիֆլիս է հասնում	երեկ.	8 » 12 »

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս. երեկ. 10 ժ. —
Ալէքսանդրօպոլ հասնում է . . . առ. 8 » 27 ր.
Կարս հասնում է . . . . . ցեր. 12 » 23 »
Կարսից դուրս է գալիս . . . . . ցեր. 4 » 12 »
Ալէքսանդրօպոլ հասնում է . . . երեկ. 7 » 40 »
Թիֆլիս հասնում է . . . . . առ. 6 » 15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Ե. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), և վեներ. հ.
Դ. Ա. Թարիանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—$7\frac{1}{2}$—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Աուվանիսեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Թարգմանում է
Զօլաի «ՓՈՂ» (Деньги) վէպը։
4—2 Հ. Մելքումեանց

Պետերբուրգի բժշկական վաչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սբեանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
55—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, փետրվարի 8-ին
ի պատիւ Վարդանանց տօնի հայ դերասանական ընկերութիւնը
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝
I
ԱՐՇԱԿ Բ.
Պատ. ողբ. 5 արար. հեղ. Խ. Գալֆայեանի
II
ԳԻՇԵՐՈՒԱՑ ՍԱԲԲԸ ԽԷՐ Է
Վոդ. 1 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբն է 8 ժ. երեկոյեան։
Ժողովարանի ոչ-անդամները մուտքի համար առանձին չեն վճարում։
Տոմսակները վաճառվում են ժողովարանի շվեյցարի մօտ։ (Ե. չ. հ.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Ուրբաթ փետրվարի 9-ին
տեղի է ունենալու
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Տղամարդիկ պէտք է վճարեն 2 ռուբլի, պ.պ. զինուորականները 1 ռուբլի. կանայք ձրի։
Տոմսակները կարելի է ստանալ ժողովարանի շվեյցարից առաւ. ժամը 11—2, երեկոյեան 7—12 ժամը։
(չ. հ. ու.) 2—3

Ներկայ 1901 թւի փետրվարի 18-ին, յերեկվայ ժամի 11-ին, կայանալու է ԱՃՈՒՐԴ Տաֆի-թաղի (Քամոյենց) ս. Գէորգ եկեղեցու գաւթում Նրա Դէվորցօվայա փողոցի անկիւնում գտնվող երկու կրպակը վարձով տալու համար՝ ներկայ տարվայ մարտի 1-ից։
Պայմանաթուղթը նախապէս կարելի է տեսնել եկեղեցու երեցփոխի մօտ ամեն օր ժամը 4—6-ին. իսկ 18-ին մինչեւ աճուրդի սկսելը նոյն գաւթում։ 3—3

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ
1889, 1890, 1891, 1892, 1893 թ. ամփոփ տարիները կարելի է ձեռք բերել 50—80% զիջումով։
Դիմել—Վիլեամինովսկայա № 24, դրասենեակ Ա. Զարդարեանցի եւ Փ. Վարդազարեանի։
(չ. չ.) 4—20

Բժիշկների զիշերային հերթապահութիւն
ԵՂԲ. Մ. ԵՒ Կ. ԵՆԻԿՕԼՕՓՕՎՆԵՐԻ
Դեղատունը
Երեկոյեան ժամը 9-ից մինչեւ առաւօտեան ժամը 7-ը։
Գոլովինսկի պրոսպեկտ, Կադետների Կորպուսի մօտ։ Տելեֆոն № 637։ 1—1

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ՄԱՑՐԵՆԻ ԽՕՍՔ
ընթերցանութեան ձեռնարկ կրտսեր դասարանների համար, համառօտ բառգրքով։
Կազմեցին Կ. Կուսիկեանց եւ Լ. Սարգսեանց, ուսուցիչներ Լազարեան ճեմարանի։
ԳԻՆԸ 70 ԿՕՊԵԿ
Վաճառվում է Թիֆլիսի Կենտրօնական գրավաճառանոցում։ 10—10

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ,
որ սովորել է քաղաքային դպրոցում եւ վարել է ուսուցչական պաշտօն զանազան քաղաքներում եւ գիւղերում, այժմ ցանկանում է մտնել ծառայութեան՝ գործարաններում, առեւտրական տներում, կամ վարել տնային ուսուցչի պաշտօն։ Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրատունը։

Վաճառվում է արտասահմանեան եւ տեղական
ԲՕԺՕԺԻ ՑԵԼՈՒԼԵԱՐՆԻՑ
զանազան տեսակի եւ յայտնի ֆիրմաների ՍԵՐՄ, կովկասեան շերամապահական կայարանի սպիտակ փաթեթներով։ Ցանկացողները վաղօրոք պիտի դիմեն. Тифлисъ, Галусту Галустьяну. 9—10

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ
„ՆԱՄՈՒՍ„
վէպը, II տպագրութեամբ, լոյս կը տեսնի յունվարի վերջին։ Դիմել՝ Баку, Александру Абелянцу. Գինը ճանապարհածախսով 1 ռուբլի։
Գրավաճառներին զիջումն։ 10—10

ՈՐԲՈՒՆԻ
Լոյս է տեսել ՈՐԲՈՒՆԻ կամ ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱԶՄԱՎԷՊը։
Գինն է ֆր. 2,50=ռուբլի 1։ սէնթ 50։
Դիմել. «Pazmaveb» (St. Lazare)—Venise, կամ Тифлисъ, Галусту Галустьянцу. 9—10

Շաբաթ, 1901 թ. փետրվարի 10-ին
«ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ» շինութեան մէջ տեղի է ունենալու
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
„ՎԱՐԴԱԳՈՅՆ ԴՕՄԻՆՕ“
Զրի եւ էժանագին ճաշարանի դրամական միջոցները աւելացնելու նպատակով
Տիկիններին խնդրում են լինել դիմակով եւ վարդագոյն դոմինոյով Այն տիկինները, որոնք չեն ցանկանայ դիմակներով լինել, վճարելու են 50 կոպէկ տուգանք։
Սկիզբը 10 ժամին։
Տոմսակի գինն է 2 ռուբլի 10 կոպէկ։
Տիկինների համար անուանական տոմսակներ կարելի է ստանալ հետեւեալ անձանց մօտ.
Տիկ. Մ. Ա. Աքիմեան, Կոնսուլսկայա, 4. Իշխ. Վ. Գ. Բարատովա, Բէուտովսկայա, սեփ. տուն.
Տիկ. Ե. Մ. Թայիրեան, Լարօրատորնայա, 6. Իշխ. Ն. Ի. Թումանեան, Բեբուտովսկայա, 17.
Տիկ. Մ. Վ. Ծովիանեան, Սերգիեվսկայա եւ Լերմոնտովսկայա փողոցների անկիւն, 10։
(կիր. երեք. հինգ. շաբ.) 2—4

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ
Հատոր առաջին։—XVI—XVII դար
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՕՊԵԿ
Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 10—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօխ։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, յունվարի 31 (փետրվարի 13)—շոգենաւ՝ ԱՆԱՏՕԼԻ, կապիտան ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳԻՐ—եղբ. Վ. եւ Ի. Մոլթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասոյսկովի, № 27. ՆՈՎՈՐՕՍԻՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն։ Ե. Ա. չ. 9—20

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Февраля 1901 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27